

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/3

11 հոկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց <Գասուռ> ՍՊԸ 30.09.2013 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

**<Գասուռ> ՍՊԸ գանգատում բերված փաստարկները**

Ընկերությունը տվյալ երթուղում շահագործել և շահագործում է 15 տրանսպորտային միջոց՝ 2 Մերսեդես-Բենց և 13 <Ֆորդ տրանզիտ> մակնիշի մեքենաներ:

<Գասուռ> ՍՊԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) հարկային պարտավորությունը սույն թվականի ապրիլի մեկի դրությամբ կազմել է 1.486.152 դրամ:

Մայիս ամսին ընկերության կողմից ներկայացվել է ելակետային նոր տվյալներ /փոփոխություն/, այն է՝ թվով չորս <Ֆորդ տրանզիտ> մակնիշի միկրոավտոբուսները փոխարինվել են <Գազել> մակնիշի միկրոավտոբուսներով, հիմք՝ տրանսպորտի նախարարության որոշումը:

Հարկային տեսչությունը սույն հայտարարությունն ընդունել է և մուտքագրել համապատասխան համակարգչային ծրագիր: Որից հետո մենք տեղեկացել ենք, որ կա համապատասխան կարգ, որի համաձայն նախապես պետք է դիմում գրվեր համապատասխան օբյեկտները դադարեցնելու վերաբերյալ, որից հետո նոր ելակետ ներկայացնել: Սակայն ելակետային հայտարարության մեջ հստակ ֆիքսվել է տվյալ տրանսպորտային միջոցների մակնիշները և նրանց փոփոխված ելակետային բազան:

Հարկ է տեղեկացնել, որ տվյալ տրանսպորտային միջոցների դեղին պետհամարանիշները չեն փոխվել ՀԲԲ-ի կողմից ընկերության շահագործվող դեղին պետհամարանիշները դուրս եկող մեքենաների վրայից հանվել և ամրակցվել են նոր մուտք լինող մեքենաների վրա:

Հարկային տեսչությունը հիմք ընդունելով սույն փոփոխության համար ներկայացված հայտարարությունը մուտքագրել է կրկնակի ելակետ /տրանսպորտային միջոց/ թվով չորս մեքենայի հաշվարկով, որը շարունակվել է շուրջ երեք ամիս: Արդյունքում գոյացել է կրկնակի հարկային պարտավորություն:

Բազմիցս Կենտրոնի հարկային տեսչություն ներկայացվել է գրություններ սույն հարցի կարգավորման խնդրանքով, սակայն ոչ մի արձագանք:

Խնդրում ենք սույն հարցն ընդգրկել գանգատարկման հանձնաժողովի նիստում, որի ընթացքում կներկայացվեն նաև այլ փաստարկներ:

Հաշվի առնելով ընկերության ներկայից ֆինանսական ծանր վիճակն ընկերությունը խնդրում է հարցին տալ լուծում:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը**

Սույն գանգատի քննարկման ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ ներկայացուցիչները նշեցին, որ <Գասուռ> ՍՊԸ կողմից 2012 թ-ի դեկտեմբեր ամսին Կենտրոնի ՀՏ է ներկայացվել <Ավտոտրանսպորտային գործունեություն

իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին> հայտարարություն, որով ներկայացվել են ընկերության կողմից հունվար ամսից մինչև հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում համապատասխան երթուղին սպասարկող մեքենաների ելակետային տվյալները: Մասնավորապես, ելակետային տվյալներ են ներկայացվել թվով 12 մեքենայի համար (դեղին համարանիշերով): Այնուհետև նույն ժամանակահատվածի, այն է՝ 2013 թ-ի մայիս և հունիս ամիսների համար, ընկերության կողմից ներկայացվել է <Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին> նոր հայտարարություն, որով փոփոխվել է նախկին հայտարարությամբ ներկայացված մեքենաների քանակը: Մասնավորապես, ելակետային տվյալներ են ներկայացվել թվով 15 մեքենայի համար (սպիտակ համարանիշերով):

« ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ-ն ընկերության կողմից թվով 15 մեքենաների վերաբերյալ ներկայացված նոր հայտարարությունը դիտվել է որպես նախկինում չներկայացված նոր մեքենաների վերաբերյալ ելակետային տվյալներ, որի արդյունքում մայիս և հունիս ամիսների համար հաստատագրված վճարների գծով ընկերության անձնական հաշվի քարտում հաշվարկվել են լրացուցիչ պարտավորություններ: Մասնավորապես, մայիս և հունիս ամիսների համար նախկին հայտարարությամբ ներկայացված թվով 12 մեքենաներից բացի հաստատագրված վճար է հաշվարկվել նաև նոր հայտարարությամբ ներկայացված թվով 15 մեքենաների համար:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ ընկերության կողմից ներկայացված նոր հայտարարությունում արտացոլված մեքենաների վերաբերյալ ելակետային տվյալները կրկնել են նախկին հայտարարությամբ բերված մեքենաների տվյալները, այսինքն՝ նոր հայտարարությամբ պարզապես ավելացվել է արդեն իսկ նախկինում ներկայացված մեքենաների թվաքանակը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է մեջբերել հետևյալ իրավանորմերով սահմանված դրույթները.

<Հաստատագրված վճարների մասին> « օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. <Ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների (բացառությամբ գործունեության դադարեցման, ներառյալ՝ ժամանակավոր) դեպքում վճարողն այդ մասին գրավոր տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային տեսչության մարմնին՝ նոր հայտարարություն (երկու օրինակից) ներկայացնելու միջոցով: Նախկին հայտարարությունը վերադարձվում է հարկային տեսչության մարմնին կամ ոչնչացվում վճարողի կողմից>:

Իր հերթին, « ԿԱ ՊԵԿ նախագահի 02.12.2009 թ-ի թիվ 3660-Ն հրամանով հաստատված <Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության լրացման կարգ>-ի 1-ին կետի համաձայն. <Ավտոտրանսպորտային գործունեության յուրաքանչյուր տեսակի՝ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) գործունեություն կամ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն, համար ներկայացնում է առանձին հայտարարություն: Ընդ որում, տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացված հայտարարության մեջ փոփոխություն կատարելու դեպքում նախապես գրավոր ներկայացվում է նոր հայտարարություն>:

Հանձնաժողովի համոզմամբ, վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում ընկերության կողմից նույն ժամանակաշրջանի համար մեկից ավելի հայտարարությունների ներկայացման պայմաններում հիմք են ընդունվում միայն վերջին (նոր) հայտարարությունում բերված տվյալները: Այսինքն, ընկերության կողմից 2013 թ-ի մայիս և հունիս ամիսների համար նոր հայտարարություն ներկայացնելու պայմաններում, նույն ժամանակաշրջանի համար ներկայացված նախկին հայտարարությունը, ըստ էության, դադարում է գոյություն ունենալ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ 2013 թ-ի մայիս և հունիս ամիսների համար ընկերության անձնական հաշվի քարտում հաստատագրված վճարների գծով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները ենթակա են նվազեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ռ ո շ ու մ է՝

«Գասուռ» ՍՊԸ անձնական հաշվի քարտից նվազեցնել 2013 թ-ի մայիս և հունիս ամիսների համար հաստատագրված վճարների գծով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ